# ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №15

ք.Երևան «30» դեկտեմբերի 2016թ

Հայաստանի երաժշտական ընկերության /ՀԵԸ/ վարչությունը, հետագայում ,,Վարձատու,, ի դեմս նախագահ Դավիթ Ղազարյանի, որը գործում է ըստ կանոնադրության, մի կողմից և Թ. Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական վաստակավոր համույթը, հետագայում ,,Վարձակալ,, ի դեմս տնօրեն Գրիգոր Ոսկանյանի, որը գործում է ըստ կանոնոդրության, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1.Պայմանագրի առարկան

1.1 Համաձայն սույն պայմանագրի Վարձատուն Հայաստանի երաժշտական ընկերությունը տարածքում Վարձակալին ժամանակավոր օգտագործման համար տրամադրում է տարածք:

## 2. Կողմերի իրավունքերն ու պարտավորությունները

**2.1 Վարձատուն պարտավորվում է.**

2.1.1. Պայմանագրի ստորոգրման օրվանից Վարձակալին տրամադրել Երևան, Սայաթ-Նովա պող. 15 հասցեում գտնվող ՀԵԸ հետևյալ տարածքը /այսուհետ Տարածք/, ամեն օր, բացի կիրակի օրերից.
ա/փորձասենյակ – 100քմ.
բ/լսարան - դասարաններ /3 հատ/ պարային խմբի համար իբրև հանդերձարաններ
գ/աշխատասենյակներ – 3հատ համույթի վարչակազմի և ղեկավարության համար
դ/վերը նշված տարածքներում ապահովում է՝
. անխափան էլեկտրաէներգիայի մատակարարում.
. հանդերձարաններում անհրաժեշտ պարագաներով՝ աթոռներ, սեղաններ, պահարաններ,դարակներ.

2.1.2 թույլատրել Վարձակալին ներկայացուցիչների մուտքը Տարածք օրվա ցանկացած ժամին, հաշվի առնելով վերջիններիս աշխատանքի բնույթը:

### 2.2 Վարձատուն իրավունք ունի.

2.2.1 Պահանջել Վարձակալից Տարածքը շահագործել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան:
2.2.2 Պահանջել Վարձակալից սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված վճարման պարտավորությունների ժամանակին կատարումը:

### 2.3 Վարձակալը պարտավորվում է.

2.3.1 Տարածքի վարձակալության դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով:
2.3.2 Տարածքում պահպանել սանիտարահամաճարակային և պետհրշեջ վերահսկողության մարմինների պահանջները:

### 2.4 Վարձակալը իրավունք ունի.

2.4.1 Ցանկացած ժամանակ մուտք գործել Տարածք:
2.4.2 Տարածքում իր հաշվին կատարել վերանորոգման աշխատանքներ Վարձատուի հետ նախապես համաձայնեցնելով աշխատանքների ծավալներն ու տեսակները:
2.4.3 Անհրաժեշտության դեպքում իրեն պատկանող գույքն ու սարքավորումները դուրս բերել տարածքից:

## 3.Վճարման ենթակա գումարը և պայմանները

3.1 Սույն պայմանագրով նախատեսված վճարման ենթակա գումարը կազմում է 300.000/երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ ամսեկան, որից տարածքի համար 250.000/երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ և կոմունալ ծախսեր՝ 50.000/հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Գազը համաձայն հաշվիչի ցուցմունքի:

3.2 Վարձակալը պարտավորվում է մինչև հաշվետու ամսին հաջորդող ամսվա 20-ը վճարել պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարը:

## 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Սույն պայմանագրով այն կողմը, որը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում իր պարտականությունները պարտավորվում է հատուցել մյուս կողմի վնասները:

4.2 Վարձակալը սույն պայմանագրի 3.2 կետով սահմանված վճարման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուին վճարում է տույժ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարվելիք գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան վճարվելիք գումարի 10 տոկոսը գերազանցող մասը:

4.3 Տույժերի վճարումը չի ազատում Կողմերին սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց,եթե գրավոր համաձայնություն ձեռք չի բերվել վերջիններիս միջև:

## 5.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը/Ֆորս մաժոր/

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգել:Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, հրդեհը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը,քաղաքական հուզումները,գործադուլները,հաղորդակցության միջոցների աշխատանքի դադրեցումը, պետական մարմինների ակտերը և այլն:եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3/երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Սույն պայմանագրով ցանկացած փոփոխություն կամ լրացում վավեր է, եթե դա կատարված է գրավոր և ստորագրված կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

6.2 Սույ պայմանագիրը գործում է **5 /հինգ/ տարի ժամկետով**:

6.3 Սույ պայմանգիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորոգրելու պահից:

6.4 Սույն պայմանագրից ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով 7/յոթ/ աշխատանքային օրվա ընթացքում:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով համաձայն ՀՀ գործող օրենսդրությամբ:

6.5 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

## 7. Կողմերի հասցեները և վավերեպայմանները

| Վարձատու | Վարձակալ |
|---|---|
| Հայաստանի երաժշտական ընկերության վարչություն | Թ.Ալթունյանի անվան Հայստանի երգի-պարի պետական համույթ |
| Հասցեն. Երևան, Սայաթ- Նովա պող.15 | Հասցեն. Երևան, Սայաթ- Նովա պող. 15 |
| ՀՎՀՀ 01512938 | ՀՎՀՀ 02511796 |
| Հայէկոնոմբանկ | ԱրդշինբանկԿասկադ մ/ճ |
| Հ/Հ 163008107431 | Հ/Հ 2474502281400010 |
| --------------------- | --------------------------- |
| Դավիթ Ղազարյան | Գրիգոր Ոսկանյան |

# ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №3

ք.Երևան 01.03.2018թ.

Հայաստանի Երաժշտական Ընկերության, ՀԿ հասցեն ՀՀ. Ք.Երևան, Սայաթ-Նովա 15 Վկայական 03 Ա 064001 տրված 22.03.2004թ. Պետ.Ռեգիստրից, ,,Վարձատու,, ի դեմս նախագահ Դավիթ Ղազարյանի, որը գործում է ըստ կանոնադրության, մի կողմից և Թաթուլ Ալթունյանի անվան Հայաստանի երգի պարի պետական վաստակավոր կոլեկտիվի տնօրինությանը, հետագայում ,,Վարձակալ,, ի դեմս տնօրեն Գրիգոր Ոսկանյանի, որը գործում է ըստ կանոնադրության, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

ա) Վարձատուն պարտավորվում է ժամանակավոր օգտագործման համար տրամադրել սեփականության իրավունքով իրեն պատկանող տարածքի մի մասը, ըստ հատակագծի՝ առաջին հարկի հ. 9-ը՝ 24,4/քսանչորս և չորս/քմ, մակերեսով, այսուհետև անշարժ գույք.

բ) Անշարժ գույքը՝ 13269 քմ., որը պատկանում է վարձատուին, համաձայն <<Կենտրոն>> կադաստրի պետական կոմիտեյի տարածքային ստորաբաժանման.

## 2. ՎԱՐՁԱԿԱԼԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է

ա) ժամանակին վարձատուին վճարել տարածքի համար վարձավճարը սույն պայմանագրով նշված չափերով և պայմաններով.

բ) սույն պայմանագրի ժամկետը լրանալու օրվանից սկսած 10 օրվա ժամկետում համապատասխան ակտով տարածքը հանձնել վարձատուին:

գ) Վարձակալական վճարը սահմանվում է ամսեկան 60,000/վաթսուն հազար/ ՀՀ դրամ, որը վճարվում է յուրաքանչյուր ամսվա 20-ը վարձակալի կողմից:

դ) Սույն պայմանագիրը կարող է ժամկետից շուտ /վաղաժամկետ/ լուծարվել կողմերից մեկի նախաձեռնությամբ:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Անշարժ գույքը հանձնվում է վարձակալին 2018թ. մարտի 1-ից չորս տարի ժամկետով՝ մինչև՝ 2022թ.-ի մարտի 1-ը/ երկու հազար քսաներկու թվ.-ի մարտի 1-ը/:

2.Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի միջև այն ստորագրելու պահից:

3.Սույն պայմանագրիը կազմված է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք հավասար իրավաբանական ուժ ունեն և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

<u>ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ</u>

| Վարձատու՝ | Վարձակալ՝ |
|---|---|
| Հայաստանի երաժշտական Ընկերության վարչություն | <<Թ.Ալթունյանի անվ. Հայաստանի երգի պարի պետական համույթ>> |
| Հասցե՝ ք.Երևան, Սայաթ-Նովա 15 | Հասցե՝ Երևան, Սայաթ-Նովա 15 |
| ՀՎՀՀ 01512938 Հայէկոնոմբանկ | ՀՎՀՀ 02511796 Հայէկոնոմբանկի |
| Հ/Կ 163008107431 | Սպանդարյան մ/ճ 163048114975 |
| Դավիթ Ղազարյան | Գրիգոր Ոսկանյան |